ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

17.08.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Ռ.Մարգարյանը - մարզպետի տեղակալ
Ս.Սարգսյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Ղարսայանը, Ա.Երիցյանը, Մ.Խեչումյանը, Ա.Բեջանյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ.

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**

   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/

2. **Այլ հարցեր**:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. **ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ռ.Մարգարյանին և աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Վ.Ղարսայանին՝**

Անհրաժեշտ աշխատանքներ տանել Լոռու մարզի համայնքների կողմից ներկայացվող՝ 2027 թվականի սուբվենցիոն ծրագրային հայտերի ոսումնասիրության և քննարկման, դրանց հիմնավորվածության և ամբողջականության պահպանման գործընթացի ուղղությամբ,

որպեսզի հնարավորինս բացառվեն հետագա փոփոխությունները ու լրացուցիչ շինաշխատանքների կատարումը:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների և դրա կատարման արդյունքի վերաբերյալ, հաշվի առնելով համայնքում կարկտահարության հետևանքով համայնքի բնակիչներին տրամադրված պետական աջակցության գումարների տարբերությունը:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Երիցյանին՝

Ներկայացնել ամփոփ տեղեկատվություն Վանաձոր համայնքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա տեղերի, սաների ընդունելության հերթերի և համայնքում երեխաների թվի վերաբերյալ :

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզի համայնքներում առկա չօգտագործվող հողատարածքների վերաբերյալ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-08-18 11:08:41 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արծ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99